

Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ

Բնագրերը ներկայացվում են անգլերեն լեզվով, տպագրված և էլեկտրոնային տարբերակով: Հստակ և հակիրճ ձևակերպումները կհեշտացնեն թե խմբագիրների, թե գրախոսների աշխատանքը, թույլ տալով նրանց կենտրոնանալ հոդվածի գիտական արժանիքների վրա: Հոդվածի ծավալը աղյուսակներով չպետք է գերազանցի 10 էջը, հաղորդմանը՝ 4 էջը, նամակինը՝ 2: Տեքստը շարել TeX ծրագրով, որի ձևաչափը, խմբագրությունը կուղարկի հեղինակին proceedings@ysu.am էլեկտրոնային հասցեով դիմելու դեպքում:

Թույլատրվում է 5-ից ոչ ավելի նկար, որոնք իրենց բացատրություններով տեղադրվում են տեքստում:

Հոդվածի առաջին էջին տեղադրվում են հեղինակների ազգանունները և հոդվածի վերնագիրը, բոլոր համահեղինակների աշխատատեղերը, հոդվածի ամփոփումը (մինչև 100 բառ), բանալի բառերը: Ամփոփումները, հեղինակների ազգանունները և հոդվածի վերնագիրը ներկայացվում են նաև հայերեն և ռուսերեն՝ “Word” ծրագրով (հայերեն տեքստը՝ Times Armenian, ռուսերենը՝ Times New Roman տառատեսակներով): Երեք ամփոփումներն էլ պետք է իրար համապատասխանեն:

Հղումները տեղակայվում են համաձայն տրամադրված ձևաչափի, անգլերեն (եթե ներկայացվող հոդվածը անգլերեն չէ նշվում է բնօրինակի լեզուն): Չհրատարակված աշխատանքի վերաբերյալ (բացառությամբ թեկնածուական և դոկտորական թեզերի) գրականության մեջ նշել չի թույլատրվում:

Հոդվածը ստորագրվում է բոլոր հեղինակների կողմից:

Խմբագրությունը հեղինակին տալիս է առաջին սրբագրությունը, որտեղ ուղղման ենթակա են տպագրության սխալները:

Խմբագրությունը հեղինակներին անվճար տրամադրում է հանդեսի 1 օրինակ և հոդվածի 5 առանձնատիպ: